**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«12» փետրվարի 2026թ. N 18-Ա

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունը և 15-րդ կետը, ինչպես նաև որակավորման հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 30-ի N 2 արձանագրությունը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2026 թվականի հունվարի 15-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Քաղաքաշինական գործունեություն իրականացնողների դերը շինարարության ավարտական փուլում» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 8 կրեդիտ:

2. Հաստատել «Քաղաքաշինական գործունեություն իրականացնողների դերը շինարարության ավարտական փուլում» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2/12/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**Հավելված**
**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի**

**2026 թվականի** փետրվարի 12**-ի N** 13**-Ա հրամանի**

**«Քաղաքաշինական գործունեություն իրականացնողների դերը շինարարության ավարտական փուլում»**

**միջոցառման ժամանակացույց**

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Միջոցառման պատասխանատու | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Փետրվարի 18-27 | 18.00-21.00 | «Քաղաքաշինական գործունեությունն իրականացնողների դերը շինարարության ավարտական փուլում» **վերապատրաստման դասընթաց** | Մարտին Դալլաքյան | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ք.Երևան, Տերյան 105 | 8 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ և 3-րդ կարգի մասնագետ 05,06,13,14,21,22 մասնագիտություններ | 32.000 դրամ |